ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Նոր Նախիջևանցի Պ. Դաւիթ Տէր Մանուէլեանցը իբրև կտակակատար յԶ Ն Փետր. տարւոյս յայտարարութեամբ ուղարկել է յանուն Սինոդի հանգուցեալ ի Տէր Նոր Նախիջևանցի Եղիա Պօղոսեան Կիւմիւշեանի ի նպաստ Մայր Աթոռոյս կտակած մի հ-էէ-է ռ-ռ-ԲԼԷ։

—

Նոր Նախիջևանի Զալթը գիւղի բարեպաշտ հասարակութիւնն առաքել էր յանուն Վեհ. Կաթուղիկոսի ԺԹ հ-էէ-է բուբլի ի նպաստ ճեմարանի Մայր Աթոռոյս։

—

Ղզլարի հոգևոր կառավարութիւնը անցեալ Դեկտմ. 29-ին յայտարարութեամբ յանուն Սինոդի ուղարկել է մի հարիւր բուբլի ի նպաստ ճեմարանի Մայր Աթոռոյս, նուէր բարեպաշտուհի Տիկին Եղիսաբէթի Սիմէոնեան Ղարիպեանց՝ ի յիշատակ հանգուցեալ ի Տէր ամուսնոյ իւրոյ Մկրտչի Իգնատիոսեան Ղարիպեանց։

—

Սիմֆերօպոլի Մարտիրոս քահանայ Ներսիսեանը ուղարկել է յանուն Սինոդի ի նպաստ Մայր Աթոռոյս քսան և հինգ բուբլի նուէր Սիմֆերօպոլի բարեպաշտուհի Տիկին Գայիանէի Ջաւարշեան։

—

Գանձակի Հոգ. Կառավարութիւնը ուղարկել է երեսուն բուբլի ի նպաստ վերանորոգութեան Մայր տաճարի Ս. Էջմիածնի, նուէր Գանձակեցի Արժ. Գրիգոր քահանայի Թումանեան, որ ի յիշատակ իւր հանգուցեալ մօր՝ Մարիամայ Թումանեան՝ առաջարկել էր Գանձակի հոգևոր կառավարութեան մի հարիւր բուբլի, երեսունը՝ Ս. Էջմիածին ուղարկելու, մնացեալ յիսուն բուբլին՝ Գանձակի Ս. Յովհաննէս եկեղեցու Երեսփոխանին շահեցնելու ի նպաստ եկեղեցուն, և քսան բուբլին ևս տեղւոյն երկսեռ հոգ. դպրոցներին յանձնելու։

—

Բաքուայ գործակալ Արժ. Խորէն քահանայ Միրզաբէկեանցը տարւոյս Յունվարի 29-ին ներկայացրել է Սինոդին ներկայ տարւոյս համար տասն բուբլի ի նպաստ ճեմարանի, նուէր Բագուեցի Պ. Խաչատրի Կիրիլեան՝ ի յիշատակ հանգուցեալ որդւոյ իւրոյ Յարութիւնի։ Յիշեալ պարոնը 1883 թուից հետէ տարեկան տասն բուբլի նուիրուած է նոյն նպատակով։

—

Ընդհակալութեամբ ստացանք

«ԿՐՕՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ» երկրորդ տարւոյ ուսումն Եկեղեցական —

Ծխական ուսումնարանների համար. պատկերազարդ, (համաձայն ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսից հաստատած ծրագրի)

Աշխատասիրեց Գիւտ Քահանայ Աղանեանց, Տփխիս, Յովհաննէս Մարտիրոսեանցի տպարան. գինն է 25 կոպեկ։

Գրքոյկը բաղկացած է 54 երեսից, և բաժանվում է երկու մասն։ Առաջին մասնում գրուած են եօթն հատ աղօթքներ, իսկ երկրորդ մասում՝ տէրունական տօների համառօտ պատմութիւնները. լեզուն դիւրըմբռնելի է։

—

«Ի Այ քեզ ջին» Վօդեւիլ մէկ արարուածով հեղինակութիւն հանգուցեալ Գ. Երեցփոխեանի. «Ի Մի համեստ պատասխան» Բարսեղ Քեամալեանի։ Հրատարակութիւն Պ. Բարսեղ Քեամալեանի։ Թէ՛ Վօդեւիլի ընտրութիւնը և թէ «Մի համեստ պատասխանը» շատ յաջողուած չեն, և չեն ծառայում իրանց նպատակին։ Վօդեւիլի բովանդակութիւնն է՝ ծաղրել հայերի անհմուտ ուսաբանութիւնը և մի շահասէր վաշխառու Թիֆլիզեցու՝ գարձեալ անհմուտ ուսաբանութիւնն ու միամտութիւնը։ Այդ մասն թէ որպէս բեմական մի գրուածք և թէ՛ որպէս ընթերցանութեան մի գիրք՝ ոչինչ բարոյական ազդեցութիւն չի կարող թողնել. իսկ «Մի համեստ պատասխանը» գրուած է շատ յանձնապաստան կերպով։

—

Ստացանք «Հանդէս ամսօրեայ» ամսագրի տարեոյս Փետրվար և Մարտ թուերը։ Փետրուար ամսաթերթի մէջ ուշադրութեան արժանի են «Պերսեպոլսոյ սեպագիրք», Ց. Հանուշ հայագէտ և Կալիցիոյ Հայոց գաւառալեզուն» և «Քրիստոնեայ Հայաստան և իւր գրականութիւնը» յօդուածները։ Իսկ Մարտ ամսաթերթի մէջ՝ ուշադրութեան արժանի են «Պատմութիւն Հայ լրագրութեան», և «Հայերէն քանի մը բառերու որոշ նշանակութիւնը»։— «Հանդէս Ամսօրեայ» թերթը առ հասարակ ընտիր յօդուածներ պարունակելով լաւ ընդունելութեան արժանի է։

—

Ստացանք նաև «Տնտես» ամսօրեայ հանդէսի 1, 2, և միասին կազմած 3 ու 4 թուերը։ Տնտեսը հրատարակվում է անցեալ 1886 ի Հոկտեմբեր ամսից. նպատակն է տնտեսագիտութիւնը մատչելի կացուցանել հայ հասարակութեանը։ Տնօրէն խմբագրապետ՝ Պ. Եղիա Տէմիրճիպաշեան. հրատարակվում է Կ. Պոլսում. բաժանորդագրութիւնը 10 դահեկան է Կ. Պոլսում, գաւառների և օտար երկրների համար 13 դահեկան։

Բաժանորդագրութեան համար պէտք է դիմել Զիվէր պէյ խան. թիւ 13, Քիւրէկճիլար փողոց, Գալաթիա. (Կ. Պոլիս)։

—